<<ԳԱԿ-ՇՀԾԶԲ-11/6>> **ծածկագրով**
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին
carayutyun-11-6@shh.gnumner.am

<< 30 >> **ապրիլի 2014թ.**

Հարգելի մասնակից՝

<<ԳԱԿ-ՇՀԾԶԲ-11/6>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ <<ՀՀԿ>> ՊՈԱԿ/ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայություն:
Սույն հրավերի /ծանուցման/ ծածկագիր է հանդիսանում <<ՇՀԾԶԲ-11/6-ՀՀԿ-14/19 >>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Թբիլիսյան խճ. 29 սենյակ 16 հասցեով, մինչև 2014 թ. մայիսի 15-ը ժամը 10:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Է. Միրզոյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի վարչական շենքում, ք.Երևան, Թբիլիսյան խճ. 29 հասցեով, N 1 սենյակում, 2014թ.-ի մայիսի 15-ին, ժամը 10:00-ին:
Գնման առարկա է հանդիսանում <<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ միևնույն հաճախականային տիրույթում տարբեր՝ ռադիոհեռարձակման, ֆիքսված, շարժական և արբանյակային, ծառայությունների կայանների աշխատանքի համատեղելիության հաշվարկի ծրագրի մշակման ծառայությունների ձեռքբերումը:

<<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ միևնույն հաճախականային տիրույթում տարբեր՝ ռադիոհեռարձակման, ֆիքսված, շարժական և արբանյակային, ծառայությունների կայանների աշխատանքի համատեղելիության հաշվարկի ծրագրի մշակման ծառայությունների մատուցման /որը կազմված է 1 չափաբաժնից/ տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի /ծանուցման/ N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված/1 բնօրինակ և 2 կրկօրինակ/՝

ա/ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /Հավելված N2/, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ/ գնային առաջարկ /Հավելված N3/: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԾԶԲ-11/6>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային հասցեն է՝ rct-gnumner@ya.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ /լրացուցիչ/ փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և Կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով /ծանուցումով/՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան /կոնկրետ/ դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝

<<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի

Գլխավոր տնօրեն՝ **Ա.Վերդյան**

Է. Միրզոյան 284787
rct-gnumner@ya.ru

Հավելված 1
<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-14/19>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ N ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-14/19

ք. Երևան <<.....>> .....*2014թ.*

<<Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն>> ՊՈԱԿ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Վերդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<----------->> ------ն, ի դեմս ընկերության տնօրեն ----------, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է միևնույն հաճախականային տիրույթում տարբեր՝ ռադիոհեռարձակման, ֆիքսված, շարժական և արբանյակային, ծառայությունների կայանների աշխատանքի համատեղելիության հաշվարկի ծրագրի մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է _____ (____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ /պահումներ/ կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող /կանխավճարի մարվող/ գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարած մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի:

Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1,2,3 և 4 հավելվածները՝ բաղկացած.....էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
<<----------->> --------	<<----------->> ------
----------	----------
<<----------բանկ>>	<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------	Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝----------	ՀՎՀՀ՝ ----------
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<<_____>> _____ 2014թ. կնքված
N <<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-14/19>> պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՄԻԵՎՆՈՒՅՆ ՀԱՃԱԽԱԿԱՆԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ՏԱՐԲԵՐ՝ ՌԱԴԻՈՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ, ՖԻՔՍՎԱԾ, ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ԾՐԱԳԻՐ

Տեխնիկական առաջադրանք

Գնման առարկա է հանդիսանում <<ՀՀԿ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ Հեռահաղորդակցության միջազգային միության (այսուհետև՝ ՀՄՄ) ռադիոկապի գրասենյակի միջազգային հաճախականային շրջաբերականների փորձաքննության ավտոմատացված համակարգ, որը թույլ կտա իրականացնել կոորդինացման գործընթացի հաշվարկներ և էլեկտրամագնիսական իրավիճակի (այսուհետև՝ ԷՄԻ) գնահատում

Հիմնական պահանջները

1. **Ավտոմատացված համակարգի նշանակում**

ՀՄՄ-ի ռադիոկապի գրասենյակի միջազգային հաճախականային շրջաբերականների փորձաքննության ավտոմատացված համակարգը անհրաժեշտ է հետևյալ խնդիրների լուծման համար՝

- պոտենցիալ անհամատեղելի արբանյակային ցանցերի որոշում,
- ազդանշան/խանգարում հարաբերության (C/I) հաշվարկ ԳԱՑ-երի համար, որոնք համատեղ օգտագործում են նույն հաճախականային շերտերը:

Տեղեկատվական ելակետային աղբյուրներն են՝ Տիեզերական ռադիոծառայությունների գծով միջազգային տեղեկատվական հաճախականային ռեգիստրը՝ (SRS բազան սկավառակի վրա), պլանավորված ԱՑ-ի նախնական հրատարակության նյութերը և ՀՀ ՌԷՄ ԱՑ-ի կոորդինացման հայտերը, որոնք պարունակվում են միջազգային հաճախականային ինֆորմացիոն շրջաբերականներում:
Արբանյակային ցանցերի հաճախականային հատկացումների մասին մեծածավալ տեղեկատվությունը թույլ չի տալիս իրագործել բարդ հաշվարկներ անմիջապես ամբողջ տվյալների բազայով՝ մեքենայական և ժամանակի պաշարների զգալի ծախսերի հետևանքով: Տվյալների լոկալ բազայի դինամիկ օգտագործումը կհանդիսանա որպես այս խնդրի լուծման արդյունավետ միջոց:
Հաշվարկները իրագործելուց առաջ պետք է իրականացվի արբանյակային համակարգերի սելեկցիա՝ հաճախականային, տարածքային կամ այլ չափանիշի համաձայն:

Այս ձևով ընտրված տեղեկատվությունը ներկայացվելու է որպես տվյալների լոկալ բազաներ, որոնք կօգտագործվեն հաշվարկային մոդուլների միջոցով՝ համաձայն լուծվող խնդիրների: Հաշվարկները պետք է իրականացվեն համաձայն ՌՌ դրույթների և ՀՄՄ-ի կողմից ներկայացված ուղեցույցների: Անհրաժեշտ է թվային եռաչափ քարտեզի առկայությունը, ինչը հնարավորություն կտա արտացոլել արբանյակային ցանցերի սպասարկման գոտիները և կետերի աշխարհագրական կոորդինատները աստիճան, րոպե, վայրկյան ձևաչափով:
Հաշվարկների ենթահամակարգը, որը մտնում է ծրագրային համալիրի կազմի մեջ, պետք է կառուցված լինի հաշվարկի "խմբագրելիության" սկզբունքով: Որպես ֆայլերի ձևաչափ հաշվարկների գեներացիայի ենթահամակարգի համար անհրաժեշտ են Excel MS Office խմբագրի XLS-ի ստանդարտ ձևաչափերը:

2. ՀՄՄ-ի ռադիոկապի գրասենյակի միջազգային հաճախականային շրջաբերականների փորձաքննության ավտոմատացված համակարգի ընդհանուր տեղեկությունները

ՀՄՄ-ի ռադիոկապի գրասենյակի միջազգային հաճախականային շրջաբերականների փորձաքննության ավտոմատացված համակարգը պետք է կազմված լինի հետևյալ հիմնական մոդուլներից՝

- հաշվարկային մոդուլ ըստ IFIC-ի փորձաքննության,
- հաշվարկային մոդուլ ըստ արբանյակային ցանցի փորձաքննության,
- հաշվարկների ավտոմատացված նախապատրաստման մոդուլ:

ՀՄՄ-ի ռադիոկապի գրասենյակի միջազգային հաճախականային շրջաբերականների փորձաքննության ավտոմատացված համակարգը պետք է իրականացնի

- այն սեփական և օտարերկյա արբանյակային ցանցերի ընտրությունը, որոնք հանդիսանում են որպես փորձաքննության առարկա,
- պոտենցիալ անհամատեղելի արբանյակային ցանցերի որոշման համար հիմնական չափանիշների ընտրություն (աղեղի տեսանելիությունը համաձայն RR Appendix 5, dT/T՝ RR Appendix 8, C/I՝ Rec. ITU-R S.580-6, RR AP8, RR AP30B Annex 4, RR AP30B Appendix 1 to Annex 4),
- արբանյակային գծի (ΔT/T) համարժեք աղմկային ջերմաստիճանի բարձացման հաշվարկը (RR Appendix 8),
- (C/I) ազդանշան/խանգարում հարաբերության հաշվարկը երկրային կամ տիեզերական կայանների ընդունիչի մուտքին (Rec. ITU-R S.580-6, RR AP8, RR AP30B Annex 4, RR AP30B Appendix 1 to Annex 4),

  տոպոցենտրիկ անկյունային բաժանումը արբանյակային ցանցերի միջև և ըստ երկայնության արբանյակների դիրքի կայունության մուտքի թույլտվությունը՝ հաշվարկ կատարելու ժամանակ:

Ծրագրով իրականացվելու է վերջնական աղյուսակի տվյալների արտահանման հնարավորությունը MS Excel խմբագրի մեջ՝ հետագա մշակման համար:

3. Գեներացվող հաշվետվությունների հիմնական ձևերը

Իրականացված հաշվարկների համաձայն ՀՄՄ-ի ռադիոկապի գրասենյակի միջազգային հաճախականային շրջաբերականների փորձաքննության ավտոմատացված համակարգը նաև պետք է թույլ տա ձևավորել հետևյալ հաշվետվությունները՝

- կրճատված հաշվետվության ձևաչափ (Հավելված 1),
- փորձաքննության արդյունքների մանրամասը հաշվետվություն (մինչև ցանցի, ճառագայթի, խմբի, կրողի ճշտությամբ) (Հավելված 2-4),
- մանրամասն հաշվետվություն ազդանշան/խանգարում հարաբերության հաշվարկի արդյունքների մասին փորձաքննության ենթարկվող արբանյակային ցանցերի միջև (Հավելված 5),
- ընդհանրացված հաշվետվություն ազդանշան/խանգարում հարաբերությունների հաշվարկի արդյունքների մասին փորձաքննության ենթարկվող արբանյակային ցանցերի միջև:

4. Սարքավորման միջոցների և ընդհանուր ծրագրային ապահովման պահանջները

Մշակվող ավտոմատացված մեթոդիկան պետք է գործի առանձին համակարգչի վրա: Ծրագիրը տեղադրելու համար անհրաժեշտ են՝

- IBM համատեղելի համակարգիչ 80486 պրոցեսորով և բարձր (32-բիթանոց օպերացիոն համակարգ),
- Windows XP օպերացիոն համակարգ,
- օպերատիվ հիշողություն ոչ պակաս քան 16 Մբ (խորհուրդ է տրում ոչ պակաս քան 32 Մբ),
- ազատ տարածության չափը կոշտ սկավառակի վրա ոչ պակաս քան 100 Մբ,
- VGA կամ ավելի մեծ կետայնությամբ մոնիտորի ապահովմամբ (խորհուրդ է տրում SVGA կամ XGA),
- Մանիպուլյատոր - “մկնիկ” :

Ելքային ձևերի տպման հնարավորության իրացման համար համակարգչի վրա պետք է տեղադրվի MS Excel Microsoft Office 97 կամ ավելի ավագ սերնդի:

Հավելված 1

1. Շրջաբերականի համարը
2. Պատասխանատու կապի ադմինիստրացիան
3. Հատուկ սեկցիայի համարը
4. Խանգարող ԱՑ
5. Կանգման դիրքը գեոստացիոնար ուղեծրի վրա
6. Ազդեցության ենթարկված հաճախականային շերտերը (ՄՀց)

7. Ազդեցության ենթարկված ԱՑ
8. Կանգման դիրքը գեոստացիոնար ուղեծրի վրա
9. dT/T (%)
10. Ազդանշանի թույլատրելի շեղումը
11. Մեկնաբանություններ

Հավելված 2

1. Հատի համարը
2. Կայանի տեսակը
3. Խանգարող ԱՑ
4. Հատուկ սեկցիա
5. Հայտի համարը
6. Կայանի տեսակը
7. Ազդեցության ենթարկված ԱՑ
8. Հատուկ սեկցիա
9. Ուղեծրային բաժանում
10. Մեկնաբանություններ
11. Հաղորդման ուղղությունը
12. Վերադրում f_{min} (ՄՀg)
13. Վերադրում f_{max} (ՄՀg)
14. dT/T (%)

Հավելված 3

1. Հայտի համարը
2. Կայանի տեսակը
3. Խանգարող ԱՑ
4. Հատուկ սեկցիա
5. Ճառագայթ
6. Հայտի համարը
7. Կայանի տեսակը
8. Ազդեցության ենթարկված ԱՑ
9. Հատուկ սեկցիա
10. Ճառագայթ
11. Ուղեծրային բաժանում
12. Մեկնաբանություններ
13. Հաղորդման ուղղությունը
14. Վերադրում f_{min} (ՄՀg)
15. Վերադրում f_{max} (ՄՀg)
16. dT/T (%)

Հավելված 4

1. Հայտի համարը
2. Կայանի տեսակը
3. Խանգարող ԱՑ
4. Հատուկ սեկցիա
5. Ճառագայթ
6. Խմբի համարը
7. Հայտի համարը
8. Կայանի տեսակը
9. Ազդեցության ենթարկված ԱՑ
10. Հատուկ սեկցիա
11. Ճառագայթ
12. Խմբի համարը
13. Ուղեծրային բաժանում
14. Մեկնաբանություններ
15. Հաղորդման ուղղությունը
16. Վերադրում f_{min} (ՄՀg)
17. Վերադրում f_{max} (ՄՀg)
18. dT/T (%)

Հավելված 5

1. Հայտի համարը
2. Կայանի տեսակը
3. Խանգարող ԱՑ
4. Հատուկ սեկցիա
5. Ճառագայթ
6. Խմբի համարը
7. Կրող հաճախականությունը
8. Հայտի համարը
9. Կայանի տեսակը
10. Ազդեցության ենթարկված ԱՑ
11. Հատուկ սեկցիա
12. Ճառագայթ
13. Խմբի համարը
14. Կրող հաճախականությունը
15. Ուղեծրային բաժանում
16. Մեկնաբանություններ
17. Հաղորդման ուղղությունը
18. Վերադրում f_{min} (ՄՀg)
19. Վերադրում f_{max} (ՄՀg)
20. dT/T (%)

Հապավումներ

ԱԱՏ - ավտոմատացված աշխատանքային տեղ
ԱԵԱ - արհեստական երկրային արբանյակ
ԱՑ - արբանյակային ցանց
ԳԱՀ - գեոստացիոնար արբանյակային համակարգ
ԳԱՑ – գեոստացիոնար արբանյակային ցանց
ԵԿ - երկրային կայան
ՏԿ - տիեզերական կայան
ՀՄՄ – Հեռահաղորդակցության միջազգային միություն
ՌՌ - Ռադիոկապի ռեգլամենտ
ՌԷՄ - ռադիոէլեկտրոնային միջոց
ՏՏԲ - տակտիկատեխնիկական բնութագրեր
ՏԲ - տվյալների բազա
ՀՀ - հաճախականային հատկացում
ԷՀ - էլեկտրամագնիսական համատեղելիություն
GIMS - ԳԱՀ-ի տիեզերական կայանների անտենաների ուժեղացման կոնտուրների տվյալների բազա
IFIC – Հաճախականային միջազգային ինֆորմացիոն շրջաբերական
SRS – ՏՏԲ ՌԷՄ ԱՑ-ի տվյալների բազա

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
<<----------->> --------	<<----------->> ------
----------	----------
<<----------բանկ>>	<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------	Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝----------	ՀՎՀՀ՝ ----------
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2
<<_____>> _____ 2014թ. կնքված
N <<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-14/19>> պայմանագրի

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2014 թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափ. միավ.	Միավորի գինը /ՀՀ դրամ/	I եռամսյակ		II եռամսյակ /մինչև 30.06.2014թ/		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քան.	գինը	քան.	գինը	քան.	գինը	քան.	գինը	քան.	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Միևնույն հաճախականային տիրույթում տարբեր՝ ռադիոհեռարձակման, ֆիքսված, շարժական և արբանյակային, ծառայությունների կայանների աշխատանքի համատեղելիության հաշվարկի ծրագրի մշակում	հատ		-	-	1	100%	-	-	-	-	-	100%

Պ ա տ վ ի ր ա տ ու

<<----------->> ---------

<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------

(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

<<----------->> ------

<<----------բանկ>>
Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝ ----------

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
<<_____>> _____ 2014թ. կնքված
N <<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-14/19>> պայմանագրի

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Միևնույն հաճախականային տիրույթում տարբեր՝ ռադիոհեռարձակման, ֆիքսված, շարժական և արբանյակային, ծառայությունների կայանների աշխատանքի համատեղելիության հաշվարկի ծրագրի մշակում	-	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

* ***Վճարման*** *ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

Պ ա տ վ ի ր ա տ ու

<<----------->>-----

<<----------բանկ>>
Հ/Հ՝ ----------
ՀՎՀՀ՝----------

(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

<<----------->>-------

<<----------բանկ>>
Հ/Հ՝----------
ՀՎՀՀ՝ ----------

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4
<<_____>> _____ 2014թ. կնքված
N <<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-14/19>> պայմանագրի

Կ ա տ ա ր ո ղ	Պ ա տ վ ի ր ա տ ու
<<.....>>	<<.....>> .....
.....	.....
<<.....բանկ>>	<<.....բանկ>>
Հ/Հ՝	Հ/Հ՝.....
ՀՎՀՀ՝.....	ՀՎՀՀ՝ .....

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<.....>> ..... 20.....թ.

Պայմանագրի անվանումը՝ .....
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<.....>> .....20.....թ.
Պայմանագրի համարը՝ .....
Պատվիրատուն՝ ի դեմս.....նը և Կատարողը՝ ի դեմս.....նը, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ ծառայություններ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը <<.....>>.....20.....թ.-ից <<.....>>.....20.....թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ ծառայությունը.

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Միևնույն հաճախականային տիրույթում տարբեր՝ ռադիոհեռարձակման, ֆիքսված, շարժական և արբանյակային, ծառայությունների կայանների աշխատանքի համատեղելիության հաշվարկի ծրագրի մշակում				
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2
<<ԳԱԿ- ՇՀԾՁԲ-11/6>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-14/19>>ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Պատվիրատուի անվանումը>>-ի կողմից N <<ՇՀԾՁԲ----/--->> ծածկագրով հայտարարված ընթացակարգի ..... չափաբաժնին (չափաբաժիններին) և
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

հրավերի /ծանուցման/ պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ <<Մասնակցի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

էլեկտրոնային փոստի հասցե>>:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3
<<ԳԱԿ- ՇՀԾՁԲ-11/6>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-14/19>>ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գնի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N <<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-14/19>> ծածկագրով ընթացակարգի հրավերը/ծանուցումը/, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Գնային առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Միևնույն հաճախականային տիրույթում տարբեր՝ ռադիոհեռարձակման, ֆիքսված, շարժական և արբանյակային, ծառայությունների կայանների աշխատանքի համատեղելիության հաշվարկի ծրագրի մշակում			

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 4
<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-14/19>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N ----------

ք. Երևան <<.....>> .....20.....թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *<<Համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման և սպասարկման ծառայությունների>>* ձեռքբերման *<<ՇՀԾՁԲ---/--->>* ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված <<Համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման և սպասարկման ծառայությունների>> ձեռքբերման N *<<ՇՀԾՁԲ---/--->>* գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու , ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ----------թվերով---------- (----------տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից:

Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն>> ՊՈԱԿ-ի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. *Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20.....թ. .....-ի.....-ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Մասնակցի անվանումը>>

<<Մասնակցի հասցեն>>

<<Մասնակցի բանկի անվանումը>>

Հ/Հ .....

ՀՎՀՀ .....

տնօրեն՝ ----------

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ----------

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 5
<<ՇՀԾՁԲ-11/6-ՀՀԿ-14/19>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ

ք. Երևան <<_____>> _____ 20.....թ.

Ընդունելով ի գիտություն, որ ՀՀ Ֆինանսների նախարարություն-ի /այսուհետև՝ Բենեֆիցիար/ և .....-ի /այսուհետև՝ Պրինցիպալ/ միջև ..... N ..... գնման պայմանագիր /այսուհետև՝ Պայմանագիր/ կնքելու համար Պրինցիպալը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում .....ՀՀ դրամ գումարի չափով /այսուհետև՝ երաշխիքային գումար/, .../այսուհետև՝ Երաշխավոր/ ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ որպես Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների /ժառանգների/ Երաշխավոր և Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների /ժառանգների/ հետ համապարտ պարտապան, ի ապահովումն Պրինցիպալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

Պրինցիպալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, Պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում Երաշխավորը պարտավորվում է անհապաղ վճարել Բենեֆիցիարին պահանջված գումարը, ինչպես նաև իրավունք է վերապահում Բենեֆիցիարին, առանց Երաշխավորին նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար, երաշխիքային գումարի սահմաններում, Երաշխավորի ՀՀ Կենտրոնական բանկում կամ Երաշխավորի ցանկացած թղթակից բանկում բացված՝ Երաշխավորի ցանկացած այլ հաշվից:

Սույնով Երաշխավորը հանձնարարում է ՀՀ Կենտրոնական բանկին, իր բոլոր թղթակից, ինչպես նաև սպասարկող բանկերին պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Երաշխավորի թղթակցային և/կամ/ այլ հաշիվներից անվիճելի կարգով գանձել պահանջվող գումարը:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխավորի կողմից:

Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև _____:

Բանկի վարչության նախագահ՝ .....Կ.Տ.
Գլխավոր հաշվապահ՝ .....